



Հաճախորդը Բանկի հետ կնքել է ավանդային պայմանագիր, ապա դիմել է Բանկ՝ ավանդի ներգրավման պայմաններով սահմանված կարգով ավանդի գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու պահանջով, սակայն Բանկը նման հնարավորություն չի տվել՝ փոխարենը առաջարկելով փոխարկել դրամային ավանդը դոլարայինի՝ պայմանագրին կից տեղեկատվական ամփոփագրում նշվածի համեմատ էականորեն ավելի ցածր դրույքաչափով: Հաճախորդը իր դիմումով պահանջել է, որպեսզի Բանկն իրեն փոխհատուցի վնասը՝ տոկոսների տարբերության չափով, սակայն ստացել է մերժում: Ծանոթ լինելով Հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը դիմել է վերջինիս՝ Բանկից պահանջելով փոխհատուցել իր կրած վնասը:

Համաձայն Բանկի կողմից Հաշտարարին ներկայացված պարզաբանումների՝ Հաճախորդը դիմել է Բանկ՝ իր կողմից ներդրած ավանդի գումարը ներդրման ժամանակ հրապարակած պայմաններով ԱՄՆ դոլարի փոխարկելու խնդրանքով, սակայն Բանկի կողմից Հաճախորդին առաջարկվել է ներդրված դրամային ավանդը փոխակերպել այլ ավանդատեսակով ԱՄՆ դոլարի՝ ավելի ցածր տոկոսադրույքով, և Հաճախորդը համաձայնվել է Բանկի կողմից կատարված առաջարկին, որը հաստատվում է ներդրված ժամկետային ավանդի պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նույն օրը կնքված համաձայնագրով: Ուսումնասիրելով դիրքորոշմանը կից ներկայացված փաստաթղթերը՝ Հաշտարարը պարզել է, որ Հաճախորդի կողմից Բանկում ներդրված ավանդները ենթակա են փոխարկման այլ արտարժույթի, եթե ավանդի պայմանագրով կամ ավանդի ներգրավման պայմաններով նախատեսված է այդպիսի հնարավորություն և այն տոկոսադրույքով, որը սահմանված է տվյալ պայմաններով: Այդ մասին են վկայում նաև ՀՀ բանկերում առկա գործարար սովորության ուսումնասիրության արդյունքները: Փաստորեն, այս պարագայում Բանկի կողմից խախտվել են Հաճախորդի՝ պայմանագրով նախատեսված իրավունքները:

Հատկանշական է, որ Հաշտարարը մշտապես առաջնորդվում է կողմերին հաշտեցնելու հիմնական սկզբունքով: Ուստի այս դեպքում ևս կողմերի մասնակցությամբ անցկացվել են բանակցություններ, որոնց արդյունքում Հաճախորդի և Բանկի միջև ձեռք է բերվել համաձայնություն, այն է՝ Բանկը պարտավորվել է վճարել Հաճախորդի կողմից պահանջված գումարը: